ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ
2017 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները
(լրամշակված)

ԵՐԵՎԱՆ 2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան…… 4

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները……9

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……9

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները ……10

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……12

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ……12

3.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանը ուղղված ներդրումներ ……15

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ……16

3.4 Մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և վերազինման ուղղությամբ կատարված ներդրումներ……17

3.5 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ ……18

ԲԱԺԻՆ 4.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները……19

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ……19

4.2 Աշխատանքների և ծառայությունների
շուկայական գների մոնիթորինգ 19

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հետագա սակագնային
մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....21

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված
ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը 21

5.2 Լուծարված հիմնական միջոցներից նվազեցումներ.....25

5.3 Սակագնային մարժայով
փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը տեխնիկական աուդիտի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված նոր հիմնավորումների վերլուծության արդյունքներով.....33

Հղումներ օգտագործված նյութերին 35

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №540Լ որոշումով հաստատված 2018 թվականի աշխատանքային ծրագրի 18-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2017-2018 թվականների Ներդրումային ծրագրերը [Որոշումներ 1-4] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունները [Հաշվետվություններ 1,2] ու տեղեկատվությունները [Տեղեկատվություններ 1-9]:

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, էլեկտրամատակարարման հուսալիության և անվտանգության աստիճանի պատշաճ մակարդակի պահպանման նաև բարձրացման նպատակով: Ներդրումներ են նախատեսվել նաև նոր սպառողների միացման և հեռանկարային սպառման պահանջարկի բավարարման նպատակով բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև առևտրային հաշվառման համակարգի՝ մասնավորապես էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ընդլայնման ուղղությամբ: Բացի վերը նշվածը բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվել են ներդրումներ գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների, ռելեական պաշտպանության և կապի միջոցների, մեքենա-մեխանիզմների ձեռքբերման, արտադրական և վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման ուղղությամբ, ինչպես նաև ISO միջազգային ստանդարտների ներդրման ուղղությամբ: Նախատեսվել է իրականացնել նաև բնապահպանական նորմերի ապահովմանն ուղղված ներդրումներ: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 24 861,0[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ 39,7%-ը նախատեսված էր ուղղել առևտրային հաշվառման համակարգի բարելավմանը: Էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման ուղղությամբ նախատեսված էր Երևան քաղաքի 6(10)/0,4 կՎ ենթակայանների ցածր լարման մասի վերակառուցում՝ էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգին միանալու նպատակով և Երևան քաղաքի 6(10)/0,4 կՎ ենթակայաններում տեղադրված էլեկտրոնային հաշվիչների ներառումը էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգում, ինչպես նաև՝ Էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրումը 0,38/0,22 կՎ ցանցերում, որի իրականացման արդյունքում նախատեսվում էր շուրջ 80 000 սպառման համակարգեր միացնել էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգին: Նախատեսված էր նաև տեղակայել նոր հաշվիչներ և հաշվիչի արկղեր՝ էլեկտրաէներգիայի

մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով:

Ներդրումների հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 28,1%-ը, նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը, ինչպես նաև Երևան քաղաքում և մարզերում թվով 60 հասցեական աշխատանքների իրականացմանը:

Ներդրումների երրորդ հիմնական հատվածը՝ շուրջ 23,2%-ը, նախատեսված էր ուղղել նոր սպառողների միացման և բաշխիչ ցանցերի ընդլայնման նպատակով հատուկ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես, ներդրումների 14,1%-ը նախատեսված էր նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման, իսկ 9,1%-ը՝ Երևան քաղաքում՝ «Պուրակ» 35/6 կՎ լարման ենթակայանի վերակառուցման, երևանյան կրկեսին հարող տարածքում 2x1600 կՎԱ հզորությամբ նոր բաշխիչ կետի կառուցման, Սյունիքի մարզում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 220 կՎ «Ագարակ» փոխարկման կետից մինչև «Ագարակ» 110 կՎ ենթակայան 110 կՎ օդային գծի կառուցման, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում «Տերյան» 35/10 կՎ ենթակայանի վերակառուցման և այլ անձանց պատկանող բաշխիչ ցանցերի ձեռք բերման ուղղություններով:

Մեքենա-մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ, որը կազմում է Ներդրումային ծրագրի 5,3%-ը՝ նախատեսված էր 68 միավոր մեքենա-մեխանիզմների, բեռնատար, ուղևորաբեռնատար, թեթև ամենագնաց մարդատար մեքենաների, ինչպես նաև յուղի մաքրման և վերականգման կայանների ձեռքբերում: Նախատեսված էր նաև 12 միավոր մեքենաների վերասարքավորում՝ գազաբալոնների տեղադրմամբ:

Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումները, որոնք կազմում են 926,0 մլն դրամ կամ ընդհանուր ներդրումների 3,7%-ը, նախատեսված էր ուղղել հետևյալ հիմնական միջոցների ձեռքբերմանը և աշխատանքների իրականացմանը.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 50,0 մլն դրամ,

- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի ձեռքբերում և ընկերության ռեսուրսների պլանավորման (ERP) համակարգի ներդրում՝ 300,0 մլն դրամ,
- վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում՝ 210,0 մլն դրամ,
- անվտանգության պարագաների, գործիքների և կապի միջոցների ձեռք բերում՝ 100,0 մլն դրամ,
- ռելեական պաշտպանության սարքերի ձեռքբերում՝ 150,0 մլն դրամ,
- կառավարման ISO ստանդարտների ներդրում՝ 36,0 մլն դրամ,
- բնապահպանական նորմերին ուղղված ներդրումներ՝ 80,0 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն՝ Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության (Հաշվետվություն 1)՝ 2017 թվականի ընթացքում իրականացվել են 23 613,2 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 22 893,4 մլն դրամ: Համաձայն Հաշվետվություն 2-ի՝ Ընկերության կողմից կարգավորման տեսանկյունից ընդունելի ավարտված ներդրումները կազմել են 22 100,3 մլն դրամ:

Հարկ է նշել, որ իրականացված ներդրումների ծավալում Ընկերությունը ներկայացրել է նաև 803,8 մլն դրամի ծախսեր, որոնք Ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն եղել: Նշված ներդրումները վերլուծության ընթացքում չեն դիտարկվել սակագնային մարժայով փոխհատուցման տեսանկյունից:

Ստորև աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	2017 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		Փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ		
							2017 թվականի ընթացքում	2017 թվականի սկզբի դրությամբ մնացորդը	Ընդամենը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	6 974.1	28.1%	5 171.3	22.6%	74.2%	5 177.6	137.4	5 315.0
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	5 763.7	23.2%	5 629.2	24.6%	97.7%	5 115.7	1 002.4	6 118.0

3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	9 875.6	39.7%	10 560.4	46.1%	106.9%	10 640.6	-	10 640.6
4	Մեքենա-մեխանիզմների ձեռքբերում	1 321.7	5.3%	699.3	3.1%	52.9%	701.4	-	701.4
5	Գրասենյակային գույքի ձեռքբերում	50.0	0.2%	96.8	0.4%	193.5%	96.8	-	96.8
6	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	300.0	1.2%	196.3	0.9%	65.4%	196.3	-	196.3
7	Վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում	210.0	0.8%	367.9	1.6%	175.2%	365.3	7.7	373.0
8	Անվտանգության պարագաների, գործիքների, ռելեական պաշտպանության և կապի միջոցների ձեռքբերում	250.0	1.0%	139.2	0.6%	55.7%	139.3	-	139.3
9	ISO ստանդարտի ներդրում	36.0	0.1%	28.5	0.1%	79.2%	28.5	-	28.5
10	Բնապահպանության նորմերին ուղված ներդրումներ	80.0	0.3%	4.4	0.02%	5.6%	4.4	-	4.4
11	**Ընդամենը**	**24 861.0**	**100%**	**22 893.4**	**100%**	**92.1%**	**22 465.7**	**1 147.5**	**23 613.2**

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, Ներդրումային ծրագիրն Ընկերությունը կատարել է 92,1%-ով, որի 46,1%-ը ուղղվել է առևտրային հաշվառման համակարգի բարելավմանը:

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև ներկայացված է 2017 թվականի ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Ավարտված և անավարտ աշխատանքների արժեքը		Ավարտված աշխատանքների արժեքը	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	1 147.5	4.9%	1 147.5	5.0%

2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	15 459.5	65.5%	15 021.3	65.6%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	1 259.3	5.3%	1 259.3	5.5%
4	Նախագծային աշխատանքների ուղղությամբ ծախսումներ	324.9	1.4%	156.6	0.7%
5	Ոչ նյութական ակտիվներ	135.7	0.6%	135.7	0.6%
6	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	5 286.3	22.4%	5 173.1	22.6%
6.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*215.5*	*0.9%*	*215.0*	*0.9%*
6.2	*նյութական ծախսումներ*	*2 221.5*	*9.4%*	*2 126.4*	*9.3%*
6.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*2 822.9*	*12.0%*	*2 805.3*	*12.3%*
6.4	*այլ ծախսումներ*	*26.5*	*0.1%*	*26.4*	*0.1%*
7	**Ընդամենը**	**23 613.2**	**100%**	**22 893.4**	**100%**

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, շահագործման հանձնված ներդրումների 5%-ը նախորդ ժամանակաշրջանում իրականացված և 2017 թվականի սկզբի դրությամբ անավարտ աշխատանքներն են: Եթե հաշվի առնենք, որ նախորդ երկու տարիների վերջում նշված մասնաբաժինը կազմել է՝ համապատասխանաբար 9,9% և 22,5%, ապա կարելի է փաստել, որ Ընկերությունը շարունակաբար բարելավում է ակտիվների շահագործման հանձնման գործընթացը: Մյուս հատկանշական փաստը սեփական ուժերով և կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների հարաբերակցության փոփոխությունն է: Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքները շուրջ 3 անգամ գերազանցում են սեփական ուժերով իրականացվածը: Այս համատեքստում հարկ է նշել, որ 2015 թվականի ընթացքում սեփական ուժերով իրականացված աշխատանքների արժեքը կազմել էր ամբողջ ներդրումների 48,4%-ը, իսկ 2016 թվականին՝ 34,6%-ը՝ ապահովելով բացասական դինամիկա:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 2017 թվականին կողմնակի կազմակերպությունների միջոցով իրականացված աշխատանքների ծավալում զգալի մասը՝ շուրջ 60%-ը կազմում է առևտրային հաշվառման համակարգի բարելավմանը՝

մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացմանը ուղղված ներդրումները:

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով Ընկերությունը Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսել էր իրականացնել 6 974,1 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցերի բարեկարգման նպատակով: Փաստացի իրականացվել են 5 315,0 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 5 171,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

Ընկերության էլեկտրամատակարարման հուսալիության ցուցանիշների ուսումնասիրությունը [Տեղեկատվություն 5] ցույց է տալիս, որ 2017 թվականին էլեկտրական ցանցերում անջատումները հիմնականում բաժին են ընկնում 0,4-6(10) կՎ լարման ցանցերին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների 91,7%-ը նախատեսվել էր իրականացնել նշված ցանցերում, որտեղ իրականացված ներդրումներից շահագործման են հանձնվել 4 941,7 մլն դրամի հիմնական միջոցներ՝ այս ենթաուղղությամբ ավարտված ներդրումների 95,6%-ը:

Սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ 2017 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է 0,4-6(10) կՎ լարման ցանցերում 2016 և 2017 թվականների ընթացքում գրանցված հրաժարումների քանակների [Տեղեկատվություն 5] համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի ընթացքում գրանցված 6 725 հրաժարումների համեմատ, 2017 թվականին հրաժարումների թիվը աճել է 5,1%-ով և կազմել է 7 067: Ընդհանուր համակարգի լարման բոլոր մակարդակներում հրաժարումների թիվը նույնպես աճել է 4,2%-ով՝ կազմելով 7 780 հրաժարում:

Հարկ է նշել, որ 2017 թվականի ընթացքում բաշխման ցանցի էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների վատթարացումը արտացոլվել է նաև հոսանքազրկումների միջին հաճախության (հոսանքազրկում/բաժանորդ) ցուցանիշի վրա՝ այն ՀՀ ամբողջ տարածքում աճել է 4,6%-ով, իսկ Վայոց Ձորի, Տավուշի, Սյունիքի և Արարատի մարզերում՝ համապատասխանաբար 319,0%-ով, 238,1%-ով, 206,2%-ով և 146,3%-ով: Ցուցանիշը նվազել է միայն Գեղարքունիքի, Կոտայքի և Լոռու մարզերում: Հոսանքազրկումների միջին տևողության (րոպե/բաժանորդ) ցուցանիշը ՀՀ ամբողջ տարածքում նվազել է 4,8%-ով, սակայն հանրապետության 7 մարզերում գրանցվել է աճ՝ մասնավորապես Վայոց Ձորի մարզում 257,2%-ով, Արարատի մարզում՝ 155,3%-ով: Իսկ հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2016 թվականի համեմատ (2,97 ժամ/ընդհատում) ևս աճել է 292,5%-ով՝ կազմելով 11,64 ժամ/ընդհատում: Նշվածի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3[2]

Սպասարկման տարածքը	Հոսանքազրկումների միջին հաճախություն					Հոսանքազրկումների միջին տևողություն			
	Չափի միավոր	2016թ. փաստ.	2017թ. փաստ.	2016թ.փաստ. 2017 թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2016 թ. փաստ.	2017 թ. փաստ.	2016 թ.փաստ. 2017 թ. փաստ. նկատմամբ
Երևան	հոսանքա-զրկում/բաժանորդ	2.6	2.7	-3.8%	րոպե/բաժանորդ	174.4	166.1	4.7%
Արարատ	հոսանքա-զրկում/բաժանորդ	0.4	1.0	-146.3%	րոպե/բաժանորդ	36.3	92.7	-155.3%
Վայոց Ձոր	հոսանքա-զրկում/բաժանորդ	0.9	3.7	-319.0%	րոպե/բաժանորդ	120.3	429.6	-257.2%
Արագածոտն	հոսանքա-զրկում/բաժանորդ	5.3	9.1	-73.1%	րոպե/բաժանորդ	548.6	762.3	-39.0%
Արմավիր	հոսանքա-զրկում/բաժանորդ	5.3	6.8	-28.8%	րոպե/բաժանորդ	563.9	691.4	-22.6%
Կոտայք	հոսանքա-զրկում/բաժանորդ	11.7	10.1	13.5%	րոպե/բաժանորդ	969.0	782.7	19.2%
Գեղարքունիք	հոսանքա-զրկում/բաժանորդ	19.1	15.7	18.2%	րոպե/բաժանորդ	1541.2	1253.0	18.7%
Տավուշ	հոսանքա-զրկում/բաժանորդ	1.4	4.8	-238.1%	րոպե/բաժանորդ	169.8	264.9	-56.0%
Շիրակ	հոսանքա-զրկում/բաժանորդ	2.4	2.8	-19.5%	րոպե/բաժանորդ	243.4	265.0	-8.9%
Սյունիք	հոսանքա-զրկում/բաժանորդ	1.3	4.0	-206.2%	րոպե/բաժանորդ	214.8	307.4	-43.1%
Լոռի	հոսանքա-զրկում/բաժանորդ	9.5	8.8	7.1%	րոպե/բաժանորդ	738.3	568.6	23.0%
Ընդամենը ՀՀ	**հոսանքա-զրկում/բաժանորդ**	**5.2**	**5.4**	**-4.6%**	**րոպե/բաժանորդ**	**434.6**	**413.6**	**4.8%**

[2] Աղուսյակ 3-ում ներառված չեն պլանային նորոգման պատճառով և ոչ մատակարարի մեղքով իրականացված ընդհատումները (այլ անձանց պատճառով, ֆորս մաժորի պատճառով):

Ներդրումային ծրագրի շրջանակում այս ուղղությամբ 127,3 մլն դրամի ներդրումների են իրականացվել 35/110 կվ լարման բաշխիչ ցանցերի վերակառուցման ենթաուղղությամբ, 442,9 մլն դրամի ներդրումներ՝ արտադրական շենքերի վերակառուցման ենթաուղղությամբ, ևս 44,1 մլն դրամի ներդրումներ՝ այլընտրանքային էլեկտրամատակարարման ապահովման ենթաուղղությամբ, որով նախատեսված էր առավել հաճախակի անջատումներ ունեցող քաղաքային բաժանորդների մոտ ապահովել երկրորդային սնուցում:

Նախատեսված էր նաև 580,0 մլն դրամի ներդրումներ իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարեկարգման նպատակով: Ներդրումներն իրականացվել են 394,5 մլն դրամ ծավալով, որից 354,7 մլն դրամը Երևան քաղաքում, իսկ 39,8 մլն դրամը՝ Լոռու, Սյունիքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում: Համաձայն ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ բազմաբնակարան շենքերի 138 մուտքերում բարելավվել են էլեկտրամատակարարման ցանցերը:

Հասցեական ծրագրերի ենթաուղղությամբ նախատեսված էր 1 832,1 մլն դրամով իրականացնել թվով 36 աշխատանքներ, սակայն իրականացվել է ընդամենը 949,5 մլն դրամի ներդրումներ 14 հասցեական աշխատանքների ուղղությամբ, որոնք ամբողջությամբ ավարտվել են: Եվս 15 հասցեներում աշխատանքներն իրականացվել են մասնակի: Մնացած 7 հասցեական աշխատանքների ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության (լարման շեղում/բաժանորդ) և տևողության (ժամ/բաժանորդ) ցուցանիշներին [Տեղեկատվություն 4], ապա աղյուսակ 4-ից երևում է, որ հանրապետությունում ընդհանուր ցուցանիշները 2016 թվականի համեմատ բարելավվել են շուրջ 25%-ով: Այս ցուցանիշների բարելավումը նկատելի է հանրապետության բոլոր մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Աղյուսակ 4

Սպասարկման տարածքը	Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն				Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն			
	Չափի միավոր	2016 թ. փաստ.	2017 թ. փաստ.	2016 թ. փաստ. 2017 թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2016 թ. փաստ.	2017 թ. փաստ.	2016 թ. փաստ. 2017 թ. փաստ. նկատմամբ
Երևան	լարման շեղում/բաժանորդ	14.0	10.7	23.3%	ժամ/բաժանորդ	2 706.8	2 023.2	25.3%
Արարատ	լարման շեղում/բաժանորդ	17.1	12.6	26.4%	ժամ/բաժանորդ	3 252.3	2 390.7	26.5%
Վայոց Ձոր	լարման շեղում/բաժանորդ	19.6	15.6	20.8%	ժամ/բաժանորդ	3 628.7	2 831.3	22.0%
Արագածոտն	լարման շեղում/բաժանորդ	17.1	11.6	31.8%	ժամ/բաժանորդ	3 180.6	2 147.4	32.5%
Արմավիր	լարման շեղում/բաժանորդ	14.3	12.1	15.2%	ժամ/բաժանորդ	2 641.0	2 240.9	15.2%
Կոտայք	լարման շեղում/բաժանորդ	13.7	9.2	32.8%	ժամ/բաժանորդ	2 545.2	1 702.2	33.1%
Գեղարքունիք	լարման շեղում/բաժանորդ	17.4	12.1	30.7%	ժամ/բաժանորդ	3 242.1	2 271.4	29.9%
Տավուշ	լարման շեղում/բաժանորդ	12.5	8.8	29.6%	ժամ/բաժանորդ	2 326.6	1 682.7	27.7%
Շիրակ	լարման շեղում/բաժանորդ	12.1	11.2	7.5%	ժամ/բաժանորդ	2 290.0	2 085.2	8.9%
Սյունիք	լարման շեղում/բաժանորդ	12.0	7.2	39.8%	ժամ/բաժանորդ	2 166.7	1 291.1	40.4%
Լոռի	լարման շեղում/բաժանորդ	11.0	8.0	27.2%	ժամ/բաժանորդ	2 059.5	1 496.1	27.4%
Ընդամենը ՀՀ	**լարման շեղում/բաժանորդ**	**14.1**	**10.6**	**24.9%**	**ժամ/բաժանորդ**	**2 659.7**	**1 977.7**	**25.6%**

Մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշներից շեղումների վերաբերյալ բնակիչների դիմում-բողոքների և Ընկերության կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա Ներդրումային ծրագրում ներառված 22 հասցեական աշխատանքներից 13-ի ուղղությամբ իրականացվել են 213,3 մլն դրամի աշխատանքներ, որից ամբողջությամբ ավարտվել են ընդամենը 9-ը հասցեներում նախատեսված աշխատանքներ: Մնացած 9-ի ուղղությամբ որևէ ներդրումներ չեն իրականացվել:

3.2 Նոր սպառողների միացմանն և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2017 թվականին նախատեսվում էր ներդնել 3 500,0 մլն դրամ: Իրականցվել է 4 760,0 մլն դրամի ներդրումներ, որից փաստացի շահագործման են

հանձնվել 4 285,9 մլն դրամի հիմնական միջոցներ: Արդյունքում՝ 2017 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 5 096 նոր բաժանորդներ: Այս ծավալում 57,4 մլն դրամի ներդրումները դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել:

Հարկ է նաև նշել, որ 2017 թվականին ցանցին միացված նոր սպառողներից ընկերության կողմից գանձվել են 1 048,8 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2017 թվականին նախատեսված էր Երևան քաղաքում ներդնել 1 446,8 մլն դրամ՝ «Պուրակ» 35/6 կՎ լարման ենթակայանի վերակառուցման և Երևանյան կրկեսին հարող տարածքում 2x1600 կՎԱ հզորությամբ նոր բաշխիչ կետի կառուցման նպատակով: Այս ենթաուղղություններով՝ 772,2 մլն դրամի ներդրումներ են իրականացվել «Պուրակ» 35/6 կՎ լարման ենթակայանի վերակառուցման և 329,7 մլն դրամ՝ Երևանյան կրկեսին հարող տարածքում նոր բաշխիչ կետի կառուցման նպատակով: Այս ուղղությամբ 110 կՎ լարման ՕԳ կառուցում՝ «ԲԷՑ» ՓԲԸ 220 կՎ Ագարակ փոխարկման կետից մինչև «Ագարակ» 110 կՎ լարման ենթակայան և «Տերյան» 35/10 կՎ լարման ենթակայանի վերակառուցում ենթաուղղություններով Ներդրումային ծրագրով նախատեսված 417,0 մլն ներդրումներից իրականացվել են ընդամենը 10,8 մլն դրամի նախագծման աշխատանքներ:

Եվս 400,0 մլն դրամ նախատեսված էր այլ անձանց պատկանող ենթակառուցվածքների ձեռքբերման համար: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 235,8 մլն դրամի հիմնական միջոցներ:

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ իրականացված ներդրումներ

Ներդրումային ծրագրի առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 9 875,6 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով Երևան քաղաքում նախատեսված էր 6(10)/0,4 կՎ լարման ենթակայանների ցածր լարման մասի վերակառուցում և ենթակայաններում

տեղադրված էլեկտրոնային հաշվիչների ներառում էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգում, ինչպես նաև՝ Էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրում 0,38/0,22 կՎ լարման ցանցերում: Նախատեսված էր նաև փոխարինել հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները և դրանց համար նախատեսված արկղերը:

Համաձայն Հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 10 560,4 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների արկղերի փոխարինում՝ 47,7 մլն դրամ,
- հաշվիչների փոխարինում՝ 1 002,9 մլն դրամ, որից 957,5 մլն դրամը սպառողների համար միաֆազ, 45,4 մլն դրամը եռաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման ուղղությամբ,
- Երևանի քաղաքի 6(10)/0,4 կՎ ենթակայանների ցածր լարման մասի վերակառուցում՝ էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգին միանալու նպատակով՝ 276,5 մլն դրամ,
- Երևան քաղաքի 6(10)/0,4 կՎ լարման ենթակայաններում տեղադրված էլեկտրոնային հաշվիչները էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգում ներառում՝ 1 004,3 մլն դրամ,
- 0,38/0,22 կՎ լարման ցանցերում Էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրում՝ 8 229,0 մլն դրամ:

3.4 Մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և վերազինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 1 321,7 մլն դրամի ներդրումներ: Համաձայն Հաշվետվության իրականացվել են 701,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 699,3 մլն դրամով ձեռք է բերվել 28 միավոր մեքենա-մեխանիզմներ, մարդա-բեռնատար, բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ: Իսկ մեքենաների վերասարքավորման՝

գազաբալոնների տեղադրմամբ, ենթաուղղությամբ իրականացված 2,1 մլն դրամի ներդրումները շահագործման չեն հանձնվել:

3.5 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 50,0 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի ձեռք են բերվել 96,8 մլն դրամի ապրանքներ
- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի, Ընկերության ռեսուրսների պլանավորման (ERP) համակարգի և համալրող սարքավորումների ձեռքբերում՝ 300,0 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք են բերվել 177,5 մլն դրամի համակարգիչներ, մոնիթորներ, անխափան սնուցման և այլ համալրող սարքավորումներ, ինչպես նաև ծրագրեր, ևս 18,8 մլն դրամ ուղղվել է Ընկերության ռեսուրսների պլանավորման (ERP) համակարգի ներդրմանը,
- վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում՝ 210,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2017 թվականի ընթացքում ներդրվել է 367,9 մլն դրամ,
- անվտանգության պարագաների և գործիքների, ռելեական պաշտպանության և կապի միջոցների ձեռքբերում՝ 250,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 117,1 մլն դրամի չափիչ սարքեր, անվտանգության պարագաներ, կապի միջոցներ և գործիքներ: Ռելեական պաշտպանության սարքերի ձեռքբերման ենթաուղղությամբ իրականացվել են 22,1 մլն դրամի ներդրումներ,
- կառավարման ISO ստանդարտի ներդրում՝ 36,0 մլն դրամ արժեքով: Այս ուղղությամբ իրականացվել են 28,5 մլն դրամի ներդրումներ,
- բնապահպանության նորմերի ապահովմանն ուղղված ներդրումներ՝ 80,0 մլն դրամ արժեքով: Այս ուղղությամբ իրականացվել են ընդամենը 4,4 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 4.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ

Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների և սարքավորումների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ դրանց ձեռքբերման գները միջինում 39%-ով գերազանցում են շուկայականը: Նման գերազանցումները մի շարք գործոնների հետևանք կարող են լինել, մասնավորապես.

ա) ապրանքների մի մասը ձեռք է բերվում միջնորդ կազմակերպությունների (կապալառուների) կողմից, իսկ վերջիններիս կարողությունները արտաքին շուկաների ուսումնասիրության և այդ շուկաներում ներկայանալու ներուժի առումով անհամեմատ սահմանափակ են քան Ընկերությանը, ինչը իր ազդեցությունն է ունենում ապրանքների ձեռքբերման գների և արտադրողների ընտրության հարցում,

բ) մինչև գնման հայտարարության հրապարակումը Ընկերությունը արդյունավետ շուկայի ուսումնասիրություն չի իրականացրել՝ պահանջվող ապրանքի բոլոր հնարավոր խոշոր մատակարարներին (արտադրողներին) հայտնաբերելու, նրանց առաջարկությունների որակի մասին հաճախորդների կարծիքներն ուսումնասիրելու, գնային տիրույթի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով,

գ) հաշվետվություններում սարքավորումների մակնշումները լրացվում են թերություններով:

4.2 Աշխատանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ

Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ դրանց գները գերազանցում են շուկայականը: Նշված գերազանցումները կարող են մի շարք գործոնների հետևանք լինել՝ մասնավորապես.

ա) Ընկերության կողմից ոչ միշտ են կապալառուին տրամադրվում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները, որի արդյունքում դրանց արժեքի նկատմամբ կապալառուները կիրառում են վերադիր ծախսեր և շահույթ, ինչը կապալառուների տեսանկյունից բնական է: Սակայն այդ նյութերն ու սարքավորումներն Ընկերության կողմից տրամադրելու դեպքում դրանց նկատմամբ կապալառուների կողմից վերադիր ծախսերի և շահույթի լրացուցիչ տոկոսներ չէին հաշվարկվի,

բ) կապալառուների կողմից այդ աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են Ընկերության կողմից կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից:

Նախագծման աշխատանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախագծող կազմակերպությունների ծառայության արժեքը հաշվարկվում է ելնելով նախահաշվային արժեքից: Այսինքն, նախագծող կազմակերպության ծառայության արժեքը ուղիղ համեմատական է նախահաշվի արժեքին: Նշված հանգամանքը կարող է դրդապատճառ հանդիսանալ նախագծող կազմակերպությունների կողմից՝ իրենց եկամուտները մեծացնելու նպատակով, աշխատանքների նախահաշվային արժեքների անհիմն ուռճացման: Այս ենթադրությունը հավաստում է նաև Ընկերության ներկայացրած տեղեկատվության [Տեղեկատվություն 1] ուսումնասիրությունը՝ համաձայն որի նախահաշվային արժեքները միջինում 43,9%-ով գերազանցում են փաստացի աշխատանքների արժեքը: Հաշվի առնելով, որ մասնագիտական գնահատմամբ՝ փաստացի իրականացված շինարարական աշխատանքների արժեքը նախահաշվային արժեքից գործնականում կարող է ունենալ մինչև 20% շեղում, ուստի կարելի է ենթադրել, որ Ընկերությունը 23,9%-ի չափով ավել վճարում է կատարել նախագծող կազմակերպություններին:

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2017 թվականի ընթացքում փաստացի ավարտված 22 893,4 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա չեն՝ մասնավորապես.

1. **նոր սպառողների միացման ուղղությամբ** իրականացված ներդրումներից նվազեցվել է 131,4 մլն դրամ հետևյալ պատճառներով՝

   ա) հաշվետվությունում ներառված են 57,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք չնայած այն հանգամանքին, որ հանձնված են շահագործման, դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ դեռևս չեն միացել: Նշված ներդրումների Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի համապատասխան բաժանորդներին փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելուց հետո,

   բ) առկա են նաև 74,0 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են մի շարք սպառողների (դիմումատուների) սպառման համակարգեր էլեկտրական ցանցին միացման աշխատանքների իրականացմանը, որոնք սակայն էլեկտրական ցանցին միացման համար վճարում չեն իրականացրել,
2. տարբեր լարման ցանցերում ՇՉՕ, ՅԱՌՎ, ՌԼՆԴ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ԿՍՕ, ԼՏԵ, ՊՌ, ԱՎՌ, ՇՌՆՎ, ՏՄԳ և ՏՄ տիպի սարքավորումների տեղակայման ուղղությամբ իրականացված ներդրումներից շուկայական գների մոնիթորինգի արդյունքում նվազեցվել է 1 544,1 մլն դրամ (Բաժին 4.1),
3. գնումների գործընթացի (A-1050-17 ծածկագրով մրցույթ) թերի կազմակերպման արդյունքում՝ 1,6 մլն դրամ նվազեցվել է հենասյունների արժեքից (Բաժին 4.1),

4. տեղակայված էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների ձեռքբերման գների մոնիթորինգի արդյունքում փաստացի իրականացված ներդրումներից նվազեցվել է 250,7 մլն դրամ (Բաժին 4.1): «Մերկուրի» մակնիշի հաշվիչների ուղղությամբ իրականացված ներդրումներից 35,3 մլն դրամ նվազեցվել է բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներին ներկայացվող՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 22-ի 96-ԶԴ հրամանի 6.9 կետի, տեխնիկական պահանջները չբավարարելու պատճառով: Եվս 71,8 հազար դրամի ներդրումներ նվազեցվել են ինդուկցիոն հաշվիչների ուղղությամբ իրականացված ներդրումներից,
5. տեղակայված հաշվիչների արկղերի շուկայական գների ուսումնասիրության և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում՝ կատարված ներդրումներից նվազեցվել է 1 458,6 մլն դրամ (Բաժին 4.1),
6. նախագծային աշխատանքների ուսումնասիրության արդյունքում ևս իրականացվել են նվազեցումներ, մասնավորապես՝ իրականացված 443,5 մլն դրամի նախագծային աշխատանքներից 159,7 մլն դրամի նախագծերով իրականացված աշխատանքներ շահագործման չեն հանձնվել: Շահագործման հանձնված 283,8 մլն դրամի նախագծերից 11,6 մլն դրամը նվազեցվել է լիցենզավորված գործունեությանը դեռևս չմասնակցելու՝ դրանց հետ կապված աշխատանքներ չիրականացնելու կամ մասնակի (մինչև 30%) իրականացնելու պատճառով: Իսկ 247,5 մլն դրամ նախագծային աշխատանքների 23,9%-ը կամ 59,1 մլն դրամը՝ համարվել է անարդյունավետ և նվազեցվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից (Բաժին 4.2):
   Վերոնշյալ 11,6 մլն դրամի ներդրումների Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի նշված նախագծերի արդյունքում իրականացված աշխատանքների ավարտից հետո,
7. հաշվի առնելով, որ Երևան քաղաքի Արշակունյաց 17Ա հասցեում գտնվող շենքում Ընկերությունը իրականացրել է հիմնանորոգման աշխատանքներ և համաձայն՝ հանձնաժողով ներկայացված օտարված (վաճառված) հիմնական միջոցների մասին տեղեկատվության [Տեղեկատվություն 8]՝ միևնույն շենքը նույն տարվա ընթացքում օտարվել է, ուստի 58,2 մլն դրամի ներդրումները ևս

նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ լիցենզավորված գործունեությանը չմասնակցելու պատճառով,

8. աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներից 194,5 մլն դրամը նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ Ընկերության աշխատակիցների աշխատավարձերն արդեն իսկ ամբողջությամբ ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում,
9. փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունում առկա են 2,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք ընթացիկ բնույթի են և ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում: Ուստի այս ծավալը նույնպես նվազեցվել է,
10. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման աշխատանքներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն Ընկերության 2012 թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների, այն է՝ մալուխային գծերի մինչև 50 մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200 մ երկարությամբ գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքներն ընթացիկ ծախսեր են: Այս ուղղությամբ նվազեցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է 107,5 մլն դրամ.
11. նոր սպառողների միացման նպատակով գանձված 1 048,8 մլն դրամ միացման վճարները ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից,
12. իրականացվել են նաև Ներդրումային ծրագրով չհամաձայնեված 80,1 մլն դրամի ներդրումներ, որոնք ևս չեն փոխհատուցվի Ընկերության սակագնային մարժայով,

13. իրականացվել է նաև Հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 139,3 մլն դրամով, որից՝

ա) գրասենյակային գույքի ձեռքբերում ենթաուղղությամբ՝ 46,8 մլն դրամ,

բ) վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում ենթաուղղությամբ՝ 92,5 մլն դրամ:

5.2 Լուծարված և օտարված հիմնական միջոցներից նվազեցումներ

Համաձայն հանձնաժողով ներկայացված տեղեկատվության [Տեղեկատվություն 6] Ընկերությունը 2017 թվականի ընթացքում կարգավորվող գործունեության մասով լուծարել է 102,0 մլն դրամի հիմնական միոցներ, որից 88,3 մլն դրամի նյութեր և այլ պիտանի դետալներ ընդգրկվել են կապիտալացվող աշխատանքներում [Տեղեկատվություն 7], ընթացիկ շահագործման և նորոգման աշխատանքներում ինչպես նաև օտարվել են կամ օգտագործվել են այլ ուղղություններով:

2017 թվականի ընթացքում Ընկերության կողմից լուծարած 179 հատ 10 կՎ ուժային տրանսֆորմատորներից ստացված պիտանի նյութերի արժեքը կազմել է ընդամենը 3,1 մլն դրամ, իսկ 2 հատ 16 000 կՎԱ ավտոտրանսֆորմատորներից՝ պիտանի նյութերի արժեքը կազմել է ընդամենը 800 դրամ, ևս 2 հատ 25 000 կՎԱ ավտոտրանսֆորմատորների լուծարումից պիտանի նյութերի արժեքը կազմել է 1,0 մլն դրամ: ԿՍՕ տիպի 214 հատ բջիջների լուծարումից ստացված պիտանի նյութերի արժեքը կազմել է 87,4 հազար դրամ: Հարկ է նշել, որ, նույնիսկ նշված հիմնական միջոցների (տրանսֆորմատորներ, ԿՍՕ-ներ և այլն) առկա մետաղի ջարդոնի իրացման գինը զգալի գերազանցում է դրանցից ստացված նյութերի արժեքը, իսկ օրինակ գունավոր մետաղներ պարունակող տրանսֆորմատորների և այլ սարքավորումների գրեթե զրոյական արժեքով լուծարումը անհասկանալի է: Միևնույն ժամանակ, լուծարվել են շուրջ 100 տարբեր տիպի սարքավորումներ, որոնք

շահագործման են հանձնվել 2015-2017 թվականների ընթացքում, ինչպես նաև հողատարածքներ և շինություններ:

Համաձայն Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվություն 8-ի և լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի գնահատողի որակավորում ստացած անձի եզրակացության՝ Ընկերության հիմանական միջոցների օտարումից ստացված եկամուտը կազմել է 703,3 մլն դրամ:

Հաշվի առնելով նշվածը, լուծարված և օտարված հիմնական միջոցներից ստացված 791,6 մլն դրամ ընդհանուր արժեքով եկամուտը ևս նվազեցվել է Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

5.3 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 5-ում ներկայացված է Ընկերության կողմից 2017 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 5

մլն դրամ (առանց ԱԱՀ)

Հ/Հ	Անվանում	Ծավալը
1	**2017 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը**	**23 613.2**
2	**Անավարտ աշխատանքներ**	**1 512.9**
3	**2017 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալն ըստ Հաշվետվություն 2-ի**	**22 100.3**
4	**Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝**	**5 088.1**
4.1	**Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ**	**3 247.8**
4.1.1	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	2 522.8
4.1.1.1	*Տեղակայման ենթակա սարքավորումների և ապրանքների արժեքից (շուկայական գները գերազանցելու պատճառով)*	*2 463.6*
4.1.1.2	*Նախագծային աշխատանքներ իրականացնող ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից*	*59.1*
4.1.2	Ընթացիկ բնույթի աշխատանքների ուղղությամբ իրականացված ծախսումներից	2.4
4.1.3	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	107.5
4.1.4	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներից	194.5
4.1.5	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող նախագծային աշխատանքներից*	11.6
4.1.6	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող այլ ներդրումներից	58.2

4.1.7	Նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված ներդրումներից	131.4
4.1.7.1	*Չմիացված բաժանորդների ուղղությամբ իրականացված ներդրումներ**	*57.4*
4.1.7.2	*Առանց միացման վճարի փաստացի վճարման իրականացված ներդրումներ*	*74.0*
4.1.8	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	139.3
4.1.9	Չհամաձայնեցված ներդրումներ	80.1
4.2	**Լուծարված և օտարված հիմնական միջոցներից ստացված եկամուտներ**	**791.6**
4.3	**Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ**	**1 048.8**
5	**2017 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը[3]**	**17 012.2**

* Լիցենզավորված գործունեությանը մասնակցելու համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու դեպքում իրականացված ներդրումները կներառվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում:

** Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալները տեխնիկական աուդիտի հաշվետվությունների և Ընկերության կողմից ներկայացված նոր հիմնավորումների վերլուծության արդյունքներով լրամշակվել են և ներկայացված են Աղյուսակ 6-ում:

[3] Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը հաշվարկվել է՝ հաշվի առնելով Հաշվետվություն 2-ով ներկայացված ավարտված ներդրումների ծավալի և Հաշվետվություն 1-ի վերլուծության արդյունքում նվազեցման ենթակա ներդրումների ծավալի տարբերությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության 2017 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 92,1%-ով:
2. Ավարտված ներդրումների մեծ մասն ուղղվել է էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրմանը: Մինչդեռ, սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ ներդրումների իրականացման ցուցանիշը կազմել է 74,2%: Հարկ է նշել, որ Ընկերության կողմից 2017 թվականին պատշաճ մոտեցում չի ցուցաբերվել ներդրումների առաջնահերթության հարցին: Մասնավորապես, Ներդրումային ծրագրի №1 և №2 հավելվածներով նախատեսված 58 հասցեական աշխատանքներից 16-ում ընդհանրապես ներդրումներ չեն իրականացվել:
3. 2017 թվականի ընթացքում 0,4/6(10) և 35/110 կՎ լարման ցանցերում էլեկտրատեղակայանքների հրաժարումների քանակը 2016 թվականի համեմատ աճել է 4,2%-ով: Միևնույն ժամանակ մեկ բաժանորդի հաշվով հրաժարումների միջին հաճախությունը ևս աճել է՝ 4,6%-ով, իսկ հրաժարումների տևողությունը կրճատվել 4,8%-ով:

   Մտահոգիչ են Արարատի, Վայոց ձորի, Տավուշի և Սյունիքի մարզերում գրանցված ցուցանիշները: Մասնավորապես սպառողների հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2016 թվականի համեմատ աճել է 292,5%-ով՝ 2,97 ընդհատում/ժամից հասնելով 11,64 ընդհատում/ժամի:
4. Ընկերության կողմից մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության (լարման շեղում/բաժանորդ) և տևողության (ժամ/բաժանորդ) ցուցանիշները [Տեղեկատվություն 4] 2016 թվականի համեմատ բարելավվել են շուրջ 25%-ով: Մինչդեռ մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների ուղղությամբ բնակիչների դիմում-բողոքների և Ընկերության կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա նախատեսված 22 հասցեական աշխատանքներից 4-ում իրականացվել են մասնակի աշխատանքներ, իսկ 9-ում որևէ ներդրում չի իրականացվել: Վերը նշվածը փաստում է, որ Ընկերության կողմից բավարար միջոցներ չեն հատկացվել

մատակարարվող էլեկտրաէներգիայի թույլատրելի սահմաններից լարման շեղման միջին տարեկան հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ և ընկերությունը Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներն ամբողջ ծավալով չի իրականացրել:

5. 2017 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 5 096 նոր սպառման համակարգեր: Այդ նպատակով 2017 թվականին փաստացի շահագործման են հանձնվել 4 285,9 մլն դրամի հիմնական միջոցներ: Հարկ է նշել, որ այս ծավալում ներառված 474,3 մլն դրամի հիմնական միջոցներ դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր սպառման համակարգեր չեն միացել: Արդյունքում 57,4 մլն դրամի ներդրումները չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Դրանց փոխհատուցման հարցը կքննարկվի համապատասխան սպառման համակարգերն փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելուց հետո:

6. Ընկերության կողմից ձեռք բերված սարքավորումների, ապրանքների և նյութերի գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ գնումների ոչ արդյունավետ կազմակերպման արդյունքում դրանց գները էականորեն գերազանցում են շուկայականը՝ շուրջ 39%, իսկ որոշ դեպքերում, օրինակ ՇՕ-70 տեսակի սարքավորումների ձեռքբերման գների գերազանցումը հասնում է 79%-ի, ՅԱՌՎ-100 տիպի սարքավորումների համար՝ 71%-ի, իսկ հաշվիչների արկերի համար՝ 34%-ի:

   Նշվածը հետևանք է գնումների գործընթացի անարդյունավետ կազմակերպման, և այն խոչընդոտների, որոնց արդյունքում արտաքին շուկաներում Ընկերության պահանջարկին համապատասխան ապրանքներ արտադրող կազմակերպությունները Ընկերության կողմից իրականացվող մրցույթներին հիմնականում չեն մասնակցում: Միևնույն ժամանակ, նյութերի և սարքավորումների մի մասը ձեռք է բերվում ոչ թե Ընկերության, այլ կապալառու կազմակերպությունների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է ապրանքների՝ բարձր գներով ձեռքբերմանը: Ուսումնասիրությունների արդյունքի վրա ազդող

գործոն է համարվում նաև հաշվետվությունում առակա սարքավորումների և ապրանքների ընդհանրական կամ թերի մակնշումները (օրինակ ՇՕ-70, բաշխիչ բջիջ և այլն): Նշված խնդրին հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է նախորդ տարիների վերլուծությունների ընթացքում:

7. Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 23 613,2 մլն դրամի ներդրումներ, որից 3 053,3 (ընդհանուրի 12,9%-ը) մլն դրամի ներդրումները համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

   Հարկ է նշել, որ ներդրումների ծավալից նվազեցումները 2016 թվականի համեմատ աճել են 5,4 տոկոսային կետով (2016 թվականին՝ 7,5%):

Ամփոփելով հարկ է նշել, որ անհրաժեշտ է հետևողական գործուն միջոցառումներ ձեռնարկել Հանձնաժողովի կողմից մատնանշված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կմեծացնի իր կողմից իրականացված ներդրումների դիմաց վերադարձ ստանալու հնարավորությունը և այդ գումարները արդյունավետ ծախսելու պարագայում կապահովվեն հնարավոր տեխնիկական և տնտեսական օգուտներ: Հարկ է նաև փաստել, որ այդ հանգամանքը իր դրական ազդեցությունը կունենա նաև սպառողների սպասարկման որակի վրա և բաշխման համակարգի բնականոն զարգացման վրա: Ուստի կարծում ենք Ընկերությունը պետք է հետևողականորեն ջանքեր գործադրի իր կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և անարդյունավետ ծախսերը բացառելու նպատակով:

Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը տեխնիկական աուդիտի հաշվետվությունների և Ընկերության կողմից ներկայացված նոր հիմնավորումների վերլուծության արդյունքներով

Հաշվի առնելով՝ Ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 7-ի №04-ԿՀ-05/380-19 և 2020 թվականի դեկտեմբերի 2-ի №04-ԱԱ-05/1752 գրություններով ներկայացված հիմնավորումների, ինչպես նաև 2019 թվականի դեկտեմբերի 11-ին «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված՝ Ընկերության 2017-2018 թվականների ներդրումային գործունեության տեխնիկական աուդիտի վերջնական հաշվետվության լրամշակված տարբերակում և 2020 թվականի դեկտեմբերի 23–ին Ընկերության 2019 թվականի ներդրումային գործունեության տեխնիկական աուդիտի նախնական տարբերակի 8-րդ կետում ներկայացված եզրակացությունների վերլուծության արդյունքները, ստորև՝ աղյուսակ 6-ում ներկայացված է Ընկերության կողմից 2017 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների նոր ծավալի գնահատականը:

Աղյուսակ 6

մլն դրամ (առանց ԱԱՀ)

Հ/Հ	Անվանում	Ծավալը
1	**2017 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը**	**23 613.2**
2	**Անավարտ աշխատանքներ**	**1 512.9**
3	**2017 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալն ըստ Հաշվետվություն 2-ի**	**22 100.3**
4	**Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝**	**3 959.3**
4.1	**Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ**	**2 022.2**
4.1.1	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	979.9
4.1.1.1	*Տեղակայման ենթակա սարքավորումների և ապրանքների արժեքից (շուկայական գները գերազանցելու պատճառով)*	*870.5*

4.1.1.2	*Նվազեցումներ շինմոնտաժային աշխատանքների մասով*	*46.8*
4.1.1.3	*Նախագծային աշխատանքներ իրականացնող ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից*	*62.2*
4.1.2	Ընթացիկ բնույթի աշխատանքների ուղղությամբ իրականացված ծախսումներից	2.4
4.1.3	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	107.5
4.1.4	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներից	194.5
4.1.5	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող նախագծային աշխատանքներից*	11.6
4.1.6	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող այլ ներդրումներից	58.2
4.1.7	Նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված՝ առանց միացման վճարի փաստացի վճարման իրականացված ներդրումներից	5.8
4.1.8	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	139.3
4.1.9	Չհամաձայնեցված ներդրումներ	80.1
4.1.10	Այլ անձանց վարձակալությամբ տրված մեքենամեխանիզմների արժեքից	442.9
4.2	**Լուծարված և օտարված հիմնական միջոցներից ստացված եկամուտներ**	**791.6**
4.3	**Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ**	**1 145.5**
5	**2017 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը[4]**	**18 141.0**

[4] Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը հաշվարկվել է՝ հաշվի առնելով Հաշվետվություն 2-ով ներկայացված ավարտված ներդրումների ծավալի և Հաշվետվություն 1-ի վերլուծության արդյունքում նվազեցման ենթակա ներդրումների ծավալի տարբերությամբ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի №414Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին ու 2016-2020 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու եվ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 4-ի №102ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»

Որոշում 2- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №488Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016-2020 թվականների ներդրումային ծրագրի 2017-2020 թվականների ճշգրտումներին համաձայնություն տալու եվ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի №414ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

Որոշում 3- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №546Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016-2020 թվականների ներդրումային ծրագրի 2017 թվականի հատվածում ճշգրտումներ կատարելու մասին»

Որոշում 4- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի №753Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի №414Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

Հաշվետվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված

ներդրումների մասին ընկերության 2018 թվականի մայիսի 10-ի №04-ԱԱ-05/1593 գրությամբ ներկայացված հաշվետվություն

Հաշվետվություն 2- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2018 թվականի հեկտեմբերի 19-ի №17-18 գրությամբ ներկայացված լրամշակված հաշվետվություն

Տեղեկատվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 2-«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 3-Սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2017 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 4-Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2017 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 5-Էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների 2017 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 6-Տեղեկատվություն լուծարված հիմնական միջոցների մասին

Տեղեկատվություն 7-Տեղեկատվություն հիմնական միջոցների լուծարումից ստացված դետալների, համալրող շինվածքների եվ այլ պիտանի նյութերի ծախսման ուղղությունների մասին

Տեղեկատվություն 8-Տեղեկատվություն օտարված (վաճառված) հիմնական միջոցների մասին

Տեղեկատվություն 9-Տեղեկատվություն անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների մասին